

Արդարեւ ժէ. դարուն սկիզբը տակաւին Քէօթահիա Կ. Պոլսոյ պատրիարքութեան մաս կը կազմէր և առանձին հովուութիւն մը կամ թեմ մը չէր (Իսթանպուլ, էջ 182) և հաւանական է որ իբր այն յիշուած է Գրիգոր Կեսարացի այդ յիշատակարանին մէջ:

Այդ պարագային իր պատրիարքութիւնը ձգելու թուականը ճշդուած կ'ըլլայ, քանի որ 1618ին Կեսարիա էր:

ԺԱ.

ԿԵՍԱՐԱՅԻՆ՝ ԻՐ ԾՆՆԴԱՎԱՅՐԻՆ ՄԷՋ
(1618 — 1625)

Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռին վրայ իրեն կը յաջորդէ իր հակառակորդը Յովհաննէս Խուլ, որ կը յիշատակուի 1620 և 1625 թուականներուն առաջնորդ Կ. Պոլսոյ (Հ. Գալէմքեարեան, Կէնսաբրո-Ռի-նէր, Ա. էջ 17: Օրմանեան, Աղգապարոմ, էջ 2361):

Այս ժամանակամիջոցին (1618 — 1625) Գրիգոր վրդ. Կեսարացի կը մնայ Կեսարիա իբր առաջնորդ, ուր, ինչպէս տեսանք, զինքն գտաւ 1618ին Սիմէոն Լեհացի:

1621ին գրուած և ցարդ անտիպ Յայսմ-